Հ. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1917 թ.)

Ցարական ինքնակալության տապալումը հսկայական քաղաքական խթան հանդիսացավ ժողովրդական զանգվածների հեղափոխական նախաձեռնության ակտիվացման գործում։ Խորտակված, փլատակների էր վերածված անիծյալ ռոմանովյան դինաստիայի 300-ամյա լուծը, որը շաղախված էր աշխատավորների սրյամբ ու քրտինքով։ Ամենուրեք ժողովրդական զանգվածները ցնծությամբ ընդունեցին ցարիզմի տապալումը։ Ողջ երկրի աշխատավորների հետ մեկտեղ հայ ժողովուրդը ևս ցարիզմի տապալմանը ակնկալեց իր դարավոր սոցիալական ու ազգային ճնշման վերացումը։ «Մարտյան ոգևորությունը» համակեց բոլորին, ովքեր այս կամ այն չափով դժգոհ էին ցարիզմի քաղաքականությունից։ Հզոր ցույցերը, բազմամարդ և ոգեշունչ միտինգները դարձան երկրամասի քաղաքական կյանքը բնութագրող երևույթներ։

Փետրվարյան հեղափոխությունը Երևանը դիմավորեց յուրովի։ Ժողովրդական ոգևորությունը առավել ցայտուն կերպով դրսևորվեց կայազորում, 281-րդ պահեստային գնդում։ Կայազորի պետ՝ գնդապետ Սոբոլևսկին մարտի սկզբին զեկուցում էր զինվորական այն դժգոհությունների մասին, որոնք տեղի էին ունենում Երևանում[1]։ Սկսված հուզումները, Պետրոգրադից, Թիֆլիսից, թե Կարսից Երևան հասնող տագնապալի լուրերը տեղի ռազմական ու քաղաքացիական իշխանություններին դրդեցին խստագույն միջոցներ ձեռնարկելու ընդլայնվող և խորացող շարժումը կանխելու համար։ Երևանի նահանգապետ Ստրելբիցկին մարտի սկզբներին հույժ գաղտնի շրջաբերականներ ուղարկեց տարբեր ուղղություններով։ Էջմիածնի գավառապետը մարտի 5-ին ստացավ մի այդպիսի գրություն, ուր ասված էր. «Պետրոգրադից սկսում են գալ և բանակի թիկունքում երևալ ինչ-որ պատգամավորներ, որոնք իրենց անվանում են բանվորական կուսակցության պատգամավորներ և զինաթափում են ոստիկանությանն ու սպաներին։

Խնդրում եմ ամենավճռական միջոցներ ձեռք առնել, որպեսզի այդ հանցագործ տարրը չթափանցի բանակ։ Հանգուցային կայարաններում ունենալ բավականաչափ ուժեղ պահակախմբեր։ Եթե այդպիսի ավազակախմբեր կերևան, ապա անհրաժեշտ է անհապաղ ձերբակալել նրանց։ Մեզ բոլորիս անհրաժեշտ է ձեռք առնել ամենավճռական միջոցներ, որպեսզի կազմալուծումն ու անարխիան չթափանցեն բանակ»[2]։

Մեռնող ցարիզմի վերջին ճիչն էր այդ։ Մահվան պահին, պատմության ու ժողովուրդների առաջ մեծագույն հանցագործը լարում էր իր վերջին ճիգերը, փորձում կանխել արևածագը։

---

1 Տե՛ս ԿՊՌՊԱ, ֆ. 1300, ց. 1, գ. 34, թ. 69։

2 Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 102, ց 1, գ. 109, թ. 11։

Նահանգապետը մտահոգված էր նաև նրանով, որպեսզի էջմիածնում գտնվող 25-րդ հրաձգային գունդը հեռու մնա հեղափոխական շարժումներից, մի բան, որը նրան չհաջողվեց[3]։

Մարտի 12-ին, թեմական ուսումնարանի շենքում կայազորի հեղափոխական զինվորների ակտիվ մասնակցությամբ, տեղի ունեցավ Երևանի աշխատավորների, այս կամ այն չափով ցարիզմից դժգոհ հասարակական տարբեր հոսանքներին պատկանող կազմակերպությունների միտինգը։ Հենց այդտեղ էլ ընտրվեց Երևանի կայազորի զինվորների դեպուտատների սովետը, որը մինչև ապրիլին ստեղծված բանվորական պատգամավորների սովետի ձևավորումը, հանդիսանում էր հեղափոխական-դեմոկրատական իշխանության միակ օրգանը։ Անդրկովկասյան հատուկ կոմիսարիատի (Օզակոմ) կոմիսարը տեղում ներկայացնում էր բուրժուական ժամանակավոր կառավարությանը։ Հիշյալ սովետում ճնշող մեծամասնություն էին կազմում էսեռները, դաշնակները, մենշևիկները և «անկարգությունները» հանդարտեցնելու մարմաջով տարված այլ համաձայնողական ուժերը։

Եթե Երևանում շարժումը ավելի մեծ չափեր չընդունեց, ինչպես ասենք այն տեղի ունեցավ Կարսում, Սարիղամիշում և այլ վայրերում, ապա դրա պատճառների մեջ պետք է տեսնել նաև այն, որ քաղաքի կես հայկական, կես ադրբեջանական բնակչությունը ցարիզմի տապալումը դիտեց իբրև նոր ազգամիջյան կոտորածների ազդանշան, «նոր անարխիայի» սկիզբ և աշխատեց որքան հնարավոր է հեռու մնալ մեծագույն քաղաքական իրադարձություններից։ Քաղաքում տիրապետող հայկական բուրժուա-նացիոնալիստական շրջանները, մասնավորապես դաշնակները, մշակականները և այլն, առերես ցույց տալով, որ ուրախ են ցարիզմի տապալմամբ, միաժամանակ և երկյուղով լցվեցին կովկասյան ռազմաճակատի հնարավոր քայքայման, թուրքական զորքերի առաջ ճակատի մերկացման, տեղում հեղափոխական ուժերի ոչ ցանկալի ակտիվացման հանդեպ։ Իրենց հետագա վարքագծով նպաստելով ռազմաճակատի մերկացմանը, դաշնակներն ու նրանց համախոհները կեղծ հայրենասիրության մի նոր վայնասուն բարձրացրին, ինչի մեջ ասես չմեղադրելով բոլշևիկներին։

Դուրս գալով ծանր ընդհատակից, ուժեր համախմբելով, հաղթահարելով բուրժուա-նացիոնալիստական և համաձայնողական կուսակցությունների հարուցած լուրջ դժվարությունները, միացյալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ ընդգրկված բոլշևիկները ակտիվ աշխատանք սկսեցին ծավալել աշխատավորների և կայազորի զինվորների շրջանում։ Հին բոլշևիկ Տարաս Իվանովը գրում է. «1917 թվականի գարնանը մեր դիվիզիան փոխադրվեց Երևան, որտեղ նույնպես տեղի էին ունենում միտինգներ ու դեպուտատների սովետների ընտրություններ։ Բանակի հեղափոխական կոմիտեի անդամները, Երևանի բոլշևիկների հետ միասին, քվեարկության ժամանակ պատշաճ հակահարված էին տալիս մենշևիկներին ու էսեռներին։ Զինվորները պոկում էին սպաների ուսադիրները և գոչում... «Կեցցե՛ բանվորների ու գյուղացիների իշխանությունը»։ «Ամբողջ իշխանությունը սովետներին»[4]։

---

3 Որոշ պատմաբանների աշխատություններում տեղ է գտել այն սխալը, թե իբր 25-րդ գունդը գտնվում էր Երևանում։

4 «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք 2-րդ, Երևան, 1961 թ., էջ 511։

Իրոք, 1917 թ. ապրիլին Երևանի կայազորում տեղի ունեցան հեղափոխական ելույթներ, որոնք լրջորեն անհանգստացրին անդրկովկասյան և տեղական ռազմա-քաղաքացիական իշխանություններին։ Երկրում խորացող քաղաքական ճգնաժամի պայմաններում, բոլշևիկների եռանդուն ագիտացիայի ազդեցությամբ, ապրիլի 20-ին զինվորները ձերբակալեցին 281-րդ հետևակային պահեստային գնդի հրամանատարին՝ գնդապետ Կորկաշվիլուն ու նրա համհարզին։ Զինվորները պահակակետեր նշանակեցին գնդի գրասենյակի առջև՝ հսկողություն սահմանելով ապայության նկատմամբ։ Իրենց վճռական գործողություններով առանձնապես աչքի ընկան պահակային վաշտի զինվորները։ Հեղափոխական ելույթի պատճառն այն էր, որ գնդի հրամանատարը հապաղում էր, կամ կիսատ-պռատ էր իրագործում բանակի դեմոկրատացման վերաբերյալ անգամ ժամանակավոր կառավարության որոշումները, էլ չենք խոսում Պետրոգրադի սովետի № 1 հայտնի հրամանի մասին։ Ավելին, հրամանատարությունը փորձում էր զինվորների նկատմամբ կիրառել պատժի հին ձևերը։

Զինվորների հեղափոխական ակտիվ գործողությունները, սակայն, ղեկավարվում էին համաձայնողական սովետի վարքագծով։ Մասսաների «բարեխղճորեն մոլորվածության», «հեղափոխական պաշտպանողականության» պայմաններում էսեռները, մենշևիկներն ու դաշնակները ավելի ու ավելի էին սողում դեպի աջ, վեր էին ածվում բուրժուական կառավարության կամակատարների։ Տիրապետություն հաստատելով սովետում, նրանք մասսաների հեղափոխական-դեմոկրատական շարժումից ծնված այդ օրգանը դարձնում էին իմպերիալիստական բուրժուազիայի, կովկասյան բանակի հրամանատարության կցորդը։ Նորահայտ արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ «վաշտերի, գնդերի և կայազորի» զինվորական պատգամավորների համաձայնողական սովետը ապրիլի 21-ի իր նիստում «քննարկելով ապրիլի 20-ին տեղի ունեցած միջադեպը, միաձայն, երկու ձեռնպահով, որոշեց. առաջին. կալանքից ազատել 281-րդ հետևակային պահեստային գնդի հրամանատարին, գնդապետ Կորկաշվիլուն և նրա համհարզին, վոխ-պարուչիկ Դվերնիցկուն, ինչպես նաև վերացնել պահակակետերը 281-րդ հետևակային պահեստային գնդի դրասենյակում, երկրորդ. ձերբակալել հուզումների գլխավոր մեղավորներին, երրորդ. նշանակել հետաքննող հանձնաժողով՝ գործերը մանրամասնորեն քննարկելու նպատակով»[5]։

Սովետի մեծամասնության համաձայնությամբ ձերբակալվեցին և բանտարկվեցին պահակային վաշտի հրամանատար Օհանջանյանը և 5 զինվորներ։

Չնայած հրամանատարության և սովետի աջ ղեկավարների միացյալ ջանքերին, կայազորում հեղափոխական ելույթները, մշտական հուզումները չդադարեցին։ Ընդհակառակը, շարժման դասերը, իրենց հեղափոխական կոչող «սոցիալիստական», համաձայնողական կուսակցությունների վարքագիծը զինվորներին ավելի հետևողական պայքարի էին մղում։ Ռեակցիոն սպայությունը դառնացած էր Երևանի կայազորի զինվորների շարժումից։ 281-րդ գնդի սպաներից մեկը, որը դեռ ապրում էր հին, միապետական երազներով, Սուխում-կալե հասցեագրած նամակում գանգատվում էր, որ «զինվորները չեն

---

5 ԿՊՌՊԱ, ֆ. 1300, ց. 1, գ. 34, թ. 84։

ճանաչում սպաներին, իսկ սպաները ման են գալիս և ոչինչ չեն անում»[6]: Սպայի այդ նամակը ընդհանրապես շատ բան է ասում 1917 թ. ապրիլ-մայիս ամիսներին Երևանի կայազորի տրամադրությունների և ողջ կովկասյան բանակի մասին։ «Գրում եմ Երևանից, ուր ես այժմ գտնվում եմ և ոչինչ չեմ անում,—ասված է այդ նամակում։ Ինձ հանձնարարում են վաշտեր, որպեսզի ես նրանց ուղեկցեմ ռազմաճակատ, բայց ես հա ծլկում եմ, որովհետև ուղեկցել այժմյան վաշտերը—դա միայն տառապանք է... Ես հայտարարեցի, որ ռազմաճակատ կգնամ մենակ... Այլ սպաների հետ ես արդեն ընտրել եմ փախչելու ուղին... Ընդհանրապես լավ բան չի տեղի ունենում այժմ մեր մոտ Ահա և քեզ ազատություն։ Իզուր չէր թագավորն ասում, որ «այժմ մեզանում մոնարխիա է, իսկ եթե դուք ամեն ինչ տապալեք, ապա կլինի անարխիա»։ Եվ իրոք, ես չգիտեմ թե ուր է տանում այս ամենը։ Հավանաբար, կվերջանա նրանով, որ ճապոնացիները կգան մեզ հանգստացնելու և ընդհանրապես շիլա կստացվի... Հրեն Գուչկովն արդեն հրաժարական տվեց, որովհետև տեսնում է, որ անմիտների հետ ոչինչ չես անի[7]։ Այստեղ, մեր մոտ, ձերբակալեցին գնդի հրամանատարին. ահավոր հայհոյանքներով և ծաղր ու ծանակով, ամբողջ քաղաքով մեկ ոտքով քշեցին նրան հաուպտվախտ...

Ընդհանրապես սա բանակ չէ, այլ սրիկայախումբ, բանդա, որի հետ խոսք անգամ չի կարող լինել հաղթանակի մասին...»[8]։

Այսպիսին էր Երևանի կայազորը ռեակցիոն սպայի շատ արժեքավոր խոստովանությամբ։

Կյանքը, իրադարձությունները զարգանում էին հօգուտ բոլշևիկների, որոնք մեծագույն արգելքներ հաղթահարելով, մասսաներին բացատրում էին ժամանակավոր կառավարության և համաձայնողական կուսակցությունների բուրժուական էությունը, աշխատում էին նրանցից պոկել դեռևս մոլորության մեջ գտնվող հեղափոխական մասսաներին։ Այդ տեսակետից Երևանի կայազորի զինվորների և քաղաքի աշխատավորների գաղափարական հասունացմանը նպաստում էր այն պայքարը, որը մղում էին բոլշևիկները բուրժուական նացիոնալիզմի, համաձայնողականության դեմ։

Դեռևս մարտի 12-ի արդեն հիշատակված միտինգում բոլշևիկների տեսակետների պարզաբանմամբ ելույթ ունեցան բոլշևիկներ Բատիկ Բատիկյանը և Հայկ Զարգարյանը։ Այդ և այլ միտինգներում բոլշևիկները հատկապես քննադատում էին շարունակվող պատերազմի իմպերիալիստական նպատակները, պահանջում վերջ տալ պատերազմին։ Նրանք դնում էին բանվորական, ագրարային, ազգային և այլ հարցերի արմատական լուծման պահանջները։

Երևանի նոր ձևավորված սոցիալ-դեմոկրատական միացյալ կազմակերպության մեջ մտնում էին բոլշևիկներ Արշավիր Մելիքյանը, Արշավիր Ղազարյանը, Բատիկ Բատիկյանը, Համո Վարդանյանը, Աղասի Խանջյանը, Լևոն Հովհաննիսյանը, Ռ. Դաշտոյանը, Ղուկաս Ղուկասյանը, Սամսոն Աստվածատրյանը, Հայկ Զարգարյանը, Խաչատուր Թանգանոսյանը և ուրիշներ։ Աշակերտական մարքսիստական կազմակերպության մեջ Ա. Խանջյանից և Ղ.

---

6 ԿՊՌՊԱ, ֆ. 1300, ց. 1, գ. 136, թ. 35։

7 Ռազմական մինիստր Գուչկովը հրաժարական տվեց ժամանակավոր կառավարության ապրիլյան ճգնաժամից հետո, հեղափոխական մասսաների պահանջով։

8 ԿՊՌՊԱ, ֆ. 1300, ց. 1, գ. 136, թ. 36։

Ղուկասյանից բացի մտնում էին նաև Արմենակ Բուդաղյանը, Պետիկ Թորոսյանը, Պ. Մակինցյանը, Խ. Նազարյանը, Մկրտիչ և Ալեքսանդր Իսահակյանները, Հայկ Աղաջանյանը, Ալ. Ղազարյանը, Աղավնի Բուդումյանը, Արամայիս Ահարոնյանը, Հատիկ Ազիզյանը, Արփիկ Բաղալյանը, Ա. Սարդարյանը . և ուրիշներ[9]։ Երևանի բոլշևիկյան կազմակերպության ոգին Արշավիր Մելիքյանն էր։ 1917 թ. Երևանում հաճախակի տեղի էին ունենում գաղափարական դիսկուսիաներ, որոնք զգալիորեն նպաստեցին երիտասարդ կոմունիստների, աշխատավորների ու զինվորների գաղափարական հասունացման գործին։ Այդ դիսկուսիաների մասին հին բոլշևիկ Արաքս Մուրադյանը հիշում է. «Մեր խնդրանքով Ա. Մելիքյանը հաճախ դիսկուսիաներ էր կազմակերպում հակամարքսիստական կուսակցությունների «տեսաբանների» հետ։ Զարմանալի սրամիտ ու պատրաստված լինելով, նա դիսպուտներում հակառակորդին այնպիսի հաջողությամբ էր ջախջախում, որ նրանք, ինչքան էլ այդ չուզենային, ստիպված էին լինում ընդունելու իրենց պարտությունը։ Դաշնակները կամ էսեռները նույնիսկ Թիֆլիսից կամ Բաքվից էին հրավիրում իրենց ամենախոշոր «տեսաբաններին»։ Այդ բանավեճերին մասնակցում էր քաղաքի համարյա ամբողջ կրթված ինտելիգենցիան։

Հիշում եմ, էսեռները և դաշնակները Բաքվից Երևան հրավիրեցին Սաքո Սահակյանին[10]։ Կազմակերպվեց դիսպուտ էսեռ Սաքոյի և բոլշևիկ Արշավիրի միջև։ Այդ դիսպուտի ժամանակ ելույթ ունեցավ նաև էջմիածնի ճեմարանավարտ Հակոբ Մանուկյանը, որը փորձեց ժխտել մարքսիզմը։ Բայց Ա. Մելիքյանը սպանիչ հարվածներ տալով Սաքոյին, փայլուն հաղթանակ տարավ իր հակառակորդի դեմ»[11]։ Դա լուրջ հարված էր ոչ միայն էսեռներին, որոնք այդ շրջանում գերիշխող ազդեցություն ունեին բանակում, այլ նաև համաձայնողականությանը ընդհանրապես։ Դաշնակների և էսեռականության միջև շատ ընդհանուր բան կար։ Տվյալ էտապում նրանք հավասարապես պաշտպանում էին ժամանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը։ Երբ ապրիլին Երևանում ստեղծվեց նաև բանվորների պատգամավորների սովետը, բոլշևիկները և նրանց հետևող աշխատավորները աշխատում էին միավորել զինվորական և բանվորական սովետները, կազմակերպել բարձրացող հակահեղափոխության դեմ նրանց համատեղ պայքարը։

Հեղափոխությունը գնալով ընդլայնվում ու խորանում էր։ Շարունակվող ավազակային պատերազմը, երկրում խորացող տնտեսական ու քաղաքական ճգնաժամը օգնում էին մասսաների հասունացման, նրանց դասակարգային պայքարի բյուրեղացման գործին։ Բոլշևիկները մերժում էին նոր հարձակումը, ինչպես Վ. Ի. Լենինն էր ասում «պատերազմի վերսկսումը», մի բան, որը փաստ դարձավ հունիսին։ Այս շրջանում Երևանի կայազորում և աշխատավորների շրջանում բոլշևիկների հեղինակությունը նկատելիորեն աճում էր։ Նրանց հետևում էին ոչ միայն պայքարում փորձված բանվորներն ու զինվորները, այլև համաձայնողական կուսակցությունների ազդեցության տակ գտնվող շատ աշխատավորներ։ Ուշագրավ երևույթ էր այն, որ շարքային շատ էսեռներ

---

9 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք 2-րդ, էջ 827, նաև «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967 թ. էջ 230։

10 Բաքվի էսեռական կազմակերպության պարագլուխը։ Կարճ ժամանակով Ստ. Շահումյանից հետո, եղել է Բաքվի սովետի նախագահը։

11 «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք 2-րդ, էջ 828։

ու մենշևիկներ բացահայտորեն դրսևորում էին իրենց ներքին խորը համակրանքը դեպի բոլշևիկներն ու նրանց առաջնորդները։ Մասսաների շրջանում մեծ արագությամբ աճում էր Վ. Ի. Լենինի հեղինակությունը։ Նման տրամադրությունները տեղ են գտել անգամ համաձայնողական մամուլի օրգաններում։

Ուժեղացող հալածանքի պայմաններում բոլշևիկները չէին կարող բացահայտորեն հանդես գալ մամուլում։ Նրանք չունեին մամուլի իրենց օրգանը Երևանում։ Նման պայմաններում այդպիսի ելույթները նկատելիորեն նպաստում էին ճշմարտության բացահայտմանը, օգնում մասսաների հասունացմանը։

Երբ վրա հասավ հեղափոխության հուլիսը, երբ համաձայնողական ուժերը դեն նետելով իրենց տատանումները «գրկախառնվեցին» հակահեղափոխության հետ, Վ. Ի. Լենինի և ողջ բոլշևիկյան կուսակցության նկատմամբ վաղուց ի վեր սկսված հալածանքը նոր, ահռելի չափեր ընդունեց։ Սակայն, նույն այս շրջանում, մինչև կոռնիլովյան միապետական խռովության բացահայտ դառնալը, Երևանում հեղափոխական շարժման ծավալման ու խորացման վրա բարերար ազդեցություն ունեցավ այն հանգամանքը, որ Պետրոգրադից այստեղ ևս արտաքսվեցին բոլշևիկորեն տրամադրված, հուլիսյան դեպքերին՝ «ապստամբությանը մասնակից» ավելի քան 1000 զինվորներ, այդ թվում գնդացրային հռչակավոր առաջին գնդի շատ զինվորներ, որոնք Երևան հասան օգոստոսին։ Նույն այդ շրջանում կովկասյան ռազմաճակատը, պահեստային զորամասերը «համալրվեցին» Պետրոգրադից , Կիևից և հեղափոխության այլ առաջնակարգ կենտրոններից արտաքսված շուրջ 20 հազար այդպիսի զինվորներով։ Տարօրինակ, անելանելի վիճակ էր ստեղծվել ժամանակավոր կառավարության համար։ Հենց նույն Կովկասում ցրվում, ապակազմվում էին հեղափոխական, բոլշևիկացող զորամասերը, բայց և մյուս կողմից կովկասյան բանակը համալրվում էր բոլշևիկացած զինվորներով։ Բանակի բոլշևիկացման պրոցեսի առաջը այլևս առնել հնարավոր չէր։

Հեղափոխական ուժերի ազդեցությունը Երևանի կայազորի վրա շուտով ասպարեզ եկավ։ Զինվորների ճնշող մեծամասնությունը դատապարտում էր դիսցիպլինար դատարանների ստեղծման վերաբերյալ կառավարության միջոցառումները, մերժում էր սպայության դերի բարձրացման նոր փորձերը։ Կայազորը «խաղաղեցնելու» նպատակով հեղափոխական զինվորների մոտ երկու վաշտ հանվեց քաղաքից և ուղարկվեց Նախիջևան, որտեղ տեղի զինվորներին միացած, 281-րդ գնդի զինվորները վճռականորեն հանդես եկան հրամանատարության դեմ։ Զինվորական ելույթի ժամանակ մի քանի զինվորներ սպանվեցին, շատերը վիրավորվեցին։ Ուշագրավ է, որ զինվորական կոմիտեն պաշտպանում էր զինվորների հեղափոխական ելույթը[12]։ Նրա նախաձեռնությամբ էլ զինվորները ձերբակալեցին և Երևան տեղափոխեցին առավել հետադեմ մի խումբ սպաների։

Օգոստոսի 10-ին Երևանում տեղի ունեցավ սպեկուլյացիայից, թանկությունից, պորտաբույծ դասակարգերի վարքագծից զայրացած զինվորների ելույթը։ Իրադարձությունների խորացումից հրամանատարությունը «անկարգությունները կանխելու» նպատակով օգնության կանչեց Դոնի 56-րդ կազակային գնդին։ Վերջինս չկատարեց կայազորի պետի կամքը, «հրաժարվեց

12 Տե՛ս ԿԳՌՊԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 278, թթ. 53—55,

դուրս գալ»[13]։ Դեպքերը ավելի խորացան, երբ զինվորներին հայտնի դարձավ, որ սպայական ժողովում մի քանի ռեակցիոն տարրեր վիրավորել են զինվորների համակրանքը վայելող սպա, բոլշևիկ Թոփուրիձեին, պահանջել են հաշվեհարդար տեսնել հեղափոխության կողմնակիցների հետ։ Հրամանատարությունը արձանագրում էր, որ Երևանի կայազորում ուժեղացել էր թշնամական վերաբերմունքը դեպի սպաները։ Տագնապալից իրավիճակին վերջ տալու նպատակով Երևան է շտապում ինքը՝ Կովկասյան ռազմական օկրուգի գլխավոր պետը, գեներալ-մայոր Մդիվանին։ Իրադարձությունները ավելի են բարդանում, երբ Նախիջևանից Երևան են բերվում հեղափոխական զինվորների ձերբակալած 5 սպաները, որոնց հետ երկաթուղով Երևան էր շարժվում նաև 261-րդ գունիբյան գունդը՝ կովկասյան բանակի առավել աչքի ընկած հեղափոխական զորամասերից մեկը։ Երբ հիշյալ գնդի զինվորները տեղեկանում են Նախիջևանում տեղի ունեցած իրադարձություններին, զինվորական ելույթի ժամանակ զոհված հեղափոխական զինվորների մասին, պահանջում են, ըստ արժանվույն, պատժել ձերբակալված և Երևան բերված սպաներին։ Երևանի համաձայնողական սովետը անընդունակ է գտնվում «զսպել ներգործությամբ և խոսքերով»։ Գունիբյան գունդը, որը կանչվել էր կարգ հաստատելու համար, ոչ միայն չի օգնում հրամանատարությանը, այլ իր հերթին սպառնալիք է ստեղծում նրա համար։ Ծարահատյալ հրամանատարությունը «դիսցիպլինար զորամաս» է խնդրում Թիֆլիսից։ Նրան միայն հաջողվում է ձերբակալված սպաներին ազատել զայրացած զինվորների դատաստանից և բանտ տեղափոխել։

Նախիջևանում և Երևանում տեղի ունեցած իրադարձությունները փայլուն վկայությունն էին այն բանի, թե որքան էին զայրացած զինվորական մասսաները հուլիսյան իրադարձություններից հետո բանակում դեմոկրատական ազատությունները խեղդելու, կյանքի, հեղափոխության կողմից մերժված հին ռեժիմը վերականգնելու ռեակցիոն միջոցառումների դեմ, որ մահապատժի սպառնալիքը անգամ այդ մասսաներին այլևս չէր կարող ետ պահել կտրուկ և վճռական գործողություններից։

Երևանում մամուլի բոլշևիկյան օրգանների բացակայությունը որոշակի դրժվարություն է ստեղծում հանգամանորեն քննարկելու կայազորի կյանքում տեղի ունեցող քաղաքական պայքարի հարցերը ետհուլիսյան ժամանակաշրջանում։ Այդ բացը ինչ-որ չափով վերացվում է զինվորական պատգամավորների համաձայնողական սովետի օրգան «Страж Свободы» թերթի մանրազնին ուսումնասիրությամբ։ Ամբողջովին ներծծված լինելով բոլշևիզմի նկատմամբ թշնամանքով, էսեռա-մենշևիկյան այդ թերթը մերթ ընդ մերթ անդրադառնում էր կայազորի կյանքին, գրում այնպիսի փաստերի մասին, որոնցից կարելի է հետևություններ անել կայազորում տեղի ունեցող հեղափոխական պրոցեսների, դասակարգային ու քաղաքական ուժերի տեղաշարժերի, բոլշևիզմի աճող հեղինակության, համաձայնողական կուսակցությունների վարքագծի, նրանց պառակտման և այլնի վերաբերյալ։

Լուրջ ուշադրության է արժանի կայազորի զինվորական պատգամավորների սովետի օգոստոսի 13-ի «արտակարգ» նիստը[14]։ Այն հրավիրվել էր

---

13 Նույն տեղում, թ. 52։

14 Տե՛ս «Страж Свободы», № 34, 17 օգոստոսի 1917 թ.։

տեղական առևտրականների դեմ զինվորների ելույթից հետո և պետք է քննարկեր օգոստոսի 10-ին սպաների ժողովում տեղի ունեցած «միջադեպը»։ Ժողովում ընդհանուր առմամբ դրված էր «Երևանի կայազորի սպաների վարքագծի հարցը»։ Նիստում առաջինը հանդես է գալիս հրամանատարության ներկայացուցիչ փոխգնդապետ Պուչկովսկին, որը աջից «կոպիտ» քննադատում է «գործադիր օրգաններին», որոնք ի վիճակի չէին կանխելու հեղափոխական շարժումը կայազորում։ Նրանից հետո հանդես է գալիս բոլշևիկ պրապորշչիկ Թուփուրիձեն, որը ձախից քննադատում, մերկացնում է Պետրոգրադի, Մոսկվայի, Երևանի և այլ համաձայնողական սովետների գործադիր կոմիտեներին, էսեռներին ու մենշևիկներին, նշելով, որ նրանք իրենց գործունեությամբ ուղի են հարթում հակահեղափոխության հաղթանակի համար։

Ժողովում տեղի ունեցած սուր բանավեճը մեծ արագությամբ լայն արձագանք է գտնում ողջ կայազորում։

Օգոստոսի 13-ի երեկոյան ժողովը շարունակում է իր աշխատանքը։ Վախենալով կայազորում դրության բարդացումից, համաձայնողական չափավոր ուժերը դատապարտում են աջ սպաներին, որոնք պահանջում էին «դատի տալ» Թուփուրիձեին։

Հարկ է նկատել, որ ոչ միայն զինվորները, այլև սպայության նկատելի մասը զայրույթով է ընդունում Կոռնիլովի առաջ ուղի հարթող այդպիսի ուժերի վայնասունը։

Նահանջի ճարպիկ օրինակ է տալիս սովետի նախագահ էսեռ Երմոլաևը, որը վերհիշում է մարտյան օրերին սպաների ու զինվորների բաղձալի «միասնությունը կարմիր դրոշի ներքո» և կոչ անում վերադառնալ այդ «երանելի» ժամանակները...

Սովետի նիստում քննարկվող 2-րդ հարցը վերաբերում էր «բանակում կարգապահության բարձրացմանը», որի մասին զեկուցում է սովետի գործկոմի աջքի ընկնող ղեկավարներից մեկը, էսեռ Կիտաևը։ Իր ելույթը սկսելով «կլասիկ ոճով», նա հայտարարում էր, որ ժամանակներն այնպիսին են, որ «մեր առաջ հարց է կանգնած, լինել թե չլինել։ Բանակը կործանվում է. բանակը քայքայվում է։ Պ. պ. սպաները լիովին մոռացել են իրենց վաշտերի մասին և միայն մտածում են ամսի 12-ի[15] մասին»։

Նիստում Սովետի նախագահ Երմոլաևը չէր քաշվում հայտնելու, որ «մեր առջևում արտաքին թշնամի է, իսկ ետևում՝ ներքին· հեղափոխությունը վտանգի մեջ է... Մենք պետք է խիտ շարքերով ետ մղենք ներքին թշնամուն (բոլշևիզմը—Հ. Մ.)... Մենք այդ կանենք միայն այն ժամանակ, երբ հանդես կգանք ուղիղ, կազմակերպված շարքերով...

Էսեռները, մենշևիկներն ու դաշնակները Երևանում ևս քայլ առ քայլ նախապատրաստում էին վերահաս ռեակցիան, կոռնիլովյան խռովությունը։

Այն վրա հասավ օգոստոսի վերջերին։ Նույն այդ օրերին դեռ շարունակում էին Երևան գալ պետրոգրադյան զինվորների նոր համալրումներ[16]։ Ոչ միայն Երևանի կայազորի հրամանատարությունը, այլև Կովկասյան ռազմական օկրուգի պետ Մդիվանին այն կարծիքին էին, որ շտապ կարգով այդ զորամասերը պետք է ռազմաճակատ ուղարկվեին։ Մդիվանին այդ հիմնավորում

15 Աշխատավարձի ստացման օրը։

16 Տե՛ս ԿՊՌՊԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 278, թ. 98։

էր «Պետրոգրադից Երևանի պահեստային գունդ եկած զինվորների մեջ տեղի ունեցած էքսցեսներով»[17]։ Բոլոր միջոցները ձեռք առնվեցին 281-րդ գնդում տեղավորված ավելի քան 1000 զինվորներին անհապաղ ռազմաճակատ ուղարկելու կապակցությամբ։ Արդեն պարզ էր, որ նրանք Շախտախտ—Ալաշկերտի Ղարաքիլիսա — Կարմունջ ուղղությամբ պետք է շարժվեին դեպի Մուշ, դեպի կովկասյան 4-րդ կորպուսի հրաձգային 2-րդ դիվիզիա։

Սակայն զինվորների «անհնազանդության» պատճառով ռազմական հրամանատարությանը և բանակի երկրային սովետին չհաջողվեց Երևանում գտնվող հեղափոխական զինվորներին ռազմաճակատ ուղարկել մինչև հոկտեմբերի սկիզբը։ Անհանգստացած Մդիվանին մեկը մյուսին հաջորդող հեռագրերով բանակի հրամանատարությունից պահանջում էր Երևանի, ինչպես և Ալեքսանդրապոլի այդ զորամասերը ուղարկել ռազմաճակատ[18]։

Այսպիսի մթնոլորտում, երբ արդեն հայտնի էր դարձել նաև կոռնիլովյան խռովությունը, սեպտեմբերի 3-ին տեղի է ունենում Երևանի կայազորի զինվորական պատգամավորների սովետի նիստը, որը արտացոլելով զինվորական մասսաների տրամադրությունները, ողջունում է «հայրենիքի և հեղափոխության դավաճան Կոռնիլովի ու նրա կողմնակիցների» դեմ «վճռական գործողությունները» և երդվում «մինչև վերջին կաթիլ արյունը պաշտպանել հայրենիքն ու հեղափոխությունը»։ Չնայած այն բանին, որ նիստը առերես ընթանում էր Կերենսկու պաշտպանությամբ, իրականում հեղափոխական կայազորի համար պարզ էր, որ Կերենսկին ուղղակի մեղսակից է կոռնիլովշչինայի նախապատրաստման գործում։ Զինվորների այդպիսի տրամադրությունների ուղղակի արտացոլումը հանդիսացավ սովետում ընդունված այն կոչը, որ «թող մահապատիժը, որը մտցված է նրանց (կոռնիլովականների—Հ. Մ.) կողմից, դամոկլյան սրի պես կախվի նրանց իսկ գլխին»[19]։ Մահապատիժը Կոռնիլովի հորդորանքով մտցրեց ժամանակավոր կառավարությունը, և նրա պարագլուխը՝ էսեռ Կերենսկին։ Ստացվում էր, որ զինվորական սովետը անուղղակիորեն դատապարտում էր բոլոր նրանց, ովքեր բանակում մահապատիժ մտցրին և պահանջում էր անհապաղ վերացնել այն։

Երևանում լույս տեսնող ոչ միայն աջ մամուլը, այլև պաշտպանողականության օրգանը հանդիսացող «Страж Свободы»-ն սրտի խորը կսկիծով էին նշում մասսաների ձախացման, դեպի բոլշևիզմը նրանց ունեցած համակրանքի մեծացման պրոցեսը, որը մասնավորապես արտացոլվում էր էսեռա-մենշևիկյան կուսակցությունների ներքին տեղաշարժերի մեջ։ «Կոռնիլովշչինայի շնորհիվ, նախկին մեծամասնության հաշվին, տեղի ունեցավ նշանակալից տեղաշարժեր դեպի ձախ,—գրում էր հիշյալ թերթը։ Ցավոք, շատերը նրանցից, ովքեր պարզորոշ կերպով նախկինում գիտակցում էին կենդանի Ռուսաստանի վրա լենինյան սոցիալական փորձերի վտանգավորությունը... այժմ ենթարկվել են լենինյանների ազդեցությանը»[20]։

Հեղափոխությունը ողջ երկրում հաղթական քայլերով առաջ էր գնում։ Կոռնիլովյան խռովությունը արագացրեց մասսաների բոլշևիկացման պրոցեսը։ Սովետների II համագումարի բացման նախօրյակին Պետրոգրադում,

17 Նույն տեղում, թ. 80։

18 Նույն տեղում, թ. 13։

19 «Страж Свободы», № 40, 7 սեպտեմբերի 1917 թ.։

20 Նույն տեղում, № 46, 1 հոկտեմբերի։

հեղափոխության օրրանում, սկսվեց հաղթական սոցիալիստական հեղափոխությունը։

Հաղթական Հոկտեմբերի լուրը Երևանում ևս ընդունվեց որպես դարի և ողջ պատմության մեծագույն իրադարձությունը։

Պետրոգրադում ապստամբության հաղթանակը շշմեցնող հարվածի ուժ ունեցավ Երևանի էսեռների, դաշնակների, մենշևիկների և այլոց համար։ «Ստրաժ սվոբոդի»-ն այդ օրերին «Ո՞ւմ հետ գնալ» հոդվածում գրեց. «Հեռագիրը լուր բերեց մեր երիտասարդ հանրապետությանը հասած նոր, ծանր փորձության մասին։

Դա գերմանական զորքերի հարձակումը չէ, նոր Կոռնիլովի հանդես գալը չէ, այլ ավելի վատ շարիք է, դա Պետրոգրադում բոլշևիկների ապստամբությունն է...»[21]։

«Սոցիալիստական» կուսակցությունների ներքին անխառն համոզմունքների ավելի բացահայտ խոստովանություն չի կարելի պատկերացնել։ Ստացվում էր, որ հարձակվող իմպերիալիստական Գերմանիան, Կոռնիլովը ավելի լավ, ավելի ընդունելի էին, քան բոլշևիկները։ Հոկտեմբերի վերջերին «Ստրաժ սվոբոդի»-ում տպագրվեց կովկասյան ռազմական օկրուգի տխրահռչակ կոմիսար, էսեռ Վլ. Գոբեչիայի կոչը ուղղված զինվորներին[22]։ Էլ ինչի մեջ ասես, որ չէին մեղադրվում բոլշևիկները, նրանց առաջնորդները։ «Խելացնոր ելույթ», «հեղափոխության ու հայրենիքի դավաճանություն» «ժողովրդի թշնամիներ» և նման բաներ։ Փարիսեցու տեսք ընդունած, Գոբեչիան «կասկածի ոչ մի ստվեր» անգամ չուներ, որ Կովկասյան օկրուգի զորքերը «հավատարիմ կմնան աղատությանը» և կդատապարտեն նրանց, «ովքեր իրագործում են գերմանական իմպերիալիզմի պլանները»։

«Ստրաժ սվոբոդի»-ն շարունակում էր վայնասուն բարձրացնել հեղափոխության դեմ, իսկ Երևանի ու նրա շրջակա վայրերի զինվորները ցնծությամբ էին ընդունում հաշտության և հողի վերաբերյալ դեկրետները, դրանք դիտում էին որպես իրենց աշխատավորական կամքի դրսևորում, չէին լսում պետերին և մերժում էին էսեռների, դաշնակների ու այլոց «սոցիալիստական» հաշիշը։

Հոկտեմբերի 28-ին, երբ Երևանի բանվորների և զինվորների պատգամավորների սովետը առաջին անգամ պետք է քններ իր վերաբերմունքը դեպի պետրոգրադյան իրադարձությունները, նույն այդ նիստում լսվեց Կովկասյան բանակի երկրային սովետի բարձրացրած հարցը Արարատ կայարանում «զինվորների անկարգությունների» վերաբերյալ[23]։ Զմոռանանք, որ Երևանի շրջակայքում տեղի ունեցող հեղափոխական ելույթները հավասարապես անհանգստացնում էին քաղաքի իշխանություններին։ Այդ ի՞նչ «անկարգությունների» մասին էր խոսքը։ Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Դավալուում (նույնը Արարատ) տեղավորված կազակային Դոնի գունդը դադարել էր ենթարկվել հրամանատարությանը։ Նրանց հրամանատար Պլատոնովը խոստովանում էր, որ «ինչ նպատակով էլ նրանց ուղարկել են, նրանք բռնություններ են գործադրել, ոչ մի դեպքում չկատարելով տրված հանձնարարությունը»[24]։ Նահանգապետ Խաչատուրովը, զորամասի հրամանատար

---

21 «Страж Свободы», № 55, 1 նոյեմբերի 1917 թ.։
22 Նույն տեղում, № 54, 29 հոկտեմբերի 1917 թ.։
23 Տե՛ս նույն տեղում, № 56, 3 նոյեմբերի 1917 թ.։
24 Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1082, ց. 4, գ. 1, թ 159։

Պլատոնովը և Երևանի քաղաքագլուխ Շախատունին «շտապ» հեռագրով խնդրում էին գլխավոր հրամանատարից և Երկրային սովետի նախագահ Դոնսկոյից այդ գունդը տեղափոխել Երևանի նահանգից, հատկապես շեշտելով, որ Երևանում ոչ մի կերպ նրանց տեղավորել չի կարելի։

Տարօրինակ բան էր ստացվում։ Ռեակցիան, որը մի ժամանակ հենվում էր կազակության սվինների վրա, այժմ սարսափում էր նրանից։ Մեր ձեռքի տակ կան բազմաթիվ փաստեր, թե ինչպես կազակությունը բոլշևիկանում էր, ենթարկվում հեղափոխական շարժման բարերար ազդեցությանը, մերթ՝ ընդ մերթ հանդես բերելով նաև անարխիստական տրամադրություններ։

Նույն այդ օրերին Երևանում գտնվող Սարատովյան դրուժինայի զինվորները բողոքում էին զորքերում սպասյակների ինստիտուտին փոխարինած յրատարների նորամուծության դեմ, որի պատճառով էլ դրուժինայում ստեղծվել էր «աննորմալ դրություն»։ Սովետը ստիպված էր դրուժինայի զինվորների բանաձևը ուղարկել երկրային սովետ՝ պարզաբանումներ ստանալու համար։

Նոյեմբերի սկզբներին լուրջ իրադարձություններ ծավալվեցին Ղամարլու (այժմ Արտաշատ) կայարանում։ Ռազմաճակատից թիկունք մեկնող 6-րդ կովկասյան հրաձգային գնդի զինվորները «կտրուկ կերպով հրաժարվեցին» ենթարկվել հրամանատարության հրամաններին՝ մնալ Ղամարլուում։ Գնացքը վերցնելով իր ձեռքը, զորամասը պատրաստվում էր մեկնել Հյուսիսային Կովկաս[25]։ Ստեղծվել էր ծայր աստիճանի լարված դրություն։ Սպաները ահի մեջ էին, որ զինվորները կարող են ինքնադատաստան տեսնել իրենց նկատմամբ։ Հրամանատարությունը պատվիրակություն ուղարկեց Երևանի քաղաքագլուխ Շախատունու մոտ։ Վերջինս ահավոր տագնապով համակված, հեռախոսով կապվեց ռազմաճակատի կոմիսար Դոնսկոյի հետ։ Մեզ հաջողվել է հայտնաբերել նրանց զրույցի սղագրությունը, որը հիանալիորեն բացահայտում է աշխարհը ցնցած այդ օրերում ռեակցիայի մահասարսուռ վախը հեղափոխական մասսաներից։ Դոնսկոյի այն հարցին, թե «ինչումն է բանը», Շախատունին նրան հայտնում էր, որ «Ղամարլուում... տեղի են ունենում մեծ մասշտաբի թյուրիմացություններ», որ «ժողովներում ու միտինգներում» զինվորները պահանջում են իրենց անհապաղ ուղարկել Հյուսիսային Կովկաս։ Նրանք Երևան մեկնած պատվիրակների առաջ պայման էին դրել, որ անպայման դրականապես լուծվի իրենց պահանջը, այլապես նրանք «զենքը ձեռքներին կստիպեն շարժվելու»։ Շախատունին ասում էր, որ «կոմիտեները, հրամանատարական կազմը և հին զինվորները ոչ մի կերպ չեն կարողանում համոզել» 6-րդ դիվիզիայի 2-րդ գնդին[26]։ Ստեղծվել էր գրեթե նույն դրությունը, ինչ Ալեքսանդրապոլում գտնվող 39-րդ դիվիզիայինն էր։ Նկատի առնելով դրության բարդացման նոր հնարավորությունները, Դոնսկոյը հայտնում էր, որ ինքը և օկրուգի գլխավոր պետը շուտով կմեկնեն Երևան, աշխատելով ետ պահել զունդը իր մտադրության իրագործումից[27]։

Նա «Հայրենիքն ու հեղափոխությունը» սպեկուլյացիայի ենթարկող մի քանի սովորական մտքեր թելադրեց, որոնք պետք է ներկայացվեին զինվոր-

25 Տե՛ս ԿՊՌՊԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 276, թ. 66։
26 Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 110,
27 Նույն տեղում, թ. 111։

ներին. «Հիշեցեք, ընկերներ, գնդի մարտական անվան մասին, այն հեղափոխական պարտքի մասին, որ Ռուսաստանը դրել է բանակի վրա...»[28]։

Փոքր ինչ քաշվելով, Շախատունին Դոնսկոյին պատասխանում էր. «Ընկեր. այդ մասին շատ են ասել գնդի պատվիրակները, որոնք այժմ կարդալով Ձեր ժապավենը ասում են, որ ոչ բոլորն են այդ հասկանում։ Ես այժմ տեսնում եմ,— շարունակում էր Շախատունին,— թե ինչպես կարդալով Ձեր խոսքերը, գնդի բոլոր պատվիրակների աչքերը լցվում են արցունքներով. բայց ի՞նչ արած, երբ անգիտակից մասսան այդ չի հասկանում, ինչ անել, երբ ոչ մի խոսք չի ազդում Հայրենիքի հոգեճմլիկ վիճակը հասկացնելու նրանց»[29]։ Նա տեղեկացնում էր, որ երկար բանակցություններից հետո զինվորները համաձայնվել են տեղավորվել միայն Երևանի զորանոցներում, այն էլ մի քանի օրով, երբ կգա դիվիզիայի 7-րդ գունդը։ Շախատունին գտնում էր, որ զինվորների այդ պահանջը «այնքան էլ հարմար չէ»։ Երկյուղ կրելով, որ իրենց շարժմամբ նրանք ազդակ կհանդիսանան, որպեսզի բացահայտվեն Երևանի կաղազորի տրամադրությունները, նա աշխատում էր Դոնսկոյին հեռացնել այդ մրտքից։ Շատ էր ահաբեկված Շախատունին։ Առանց քաշվելու, դաշնակցական այդ քաղաքագլուխը հայտնում էր, որ ինքը ցանկանում է գնալ Ղամարլու, բայց «ցավոք սրտի տեղափոխման միջոց չունեմ, և որ վախենում եմ այսպիսի լուրջ ժամանակներում թողնել քաղաքը»[30]։ Ավարտելով իր խոսքը Շախատունին Դոնսկոյին հայտնում էր. «Գնդի հրամանատարը պատվիրակ զինվորների հետ թախանձում է փրկել գնդի պատիվը» և իր կողմից խնդրում հայտնել Պետրոգրադում տիրող դրության վերաբերյալ վերջին տեղեկությունները։

Դոնսկոյը հայտնում էր իր վերջնական կարծիքը. «Ինչ գնով ուզում է լինի գունդը պետք է բեռնաթափվի, (տեղավորվի) Ղամարլուի նշանակված դրպրոցներում և սպասի իմ ու կովկասյան օկրուգի գլխավոր պետի գալստյանը։ (Երկաթուղային) կազմը չպետք է նրանց ենթարկվի... Պատրաստվեցեք վճռական պատասխանի, չի կարելի թույլ տալ ինքնակամ տեղափոխություն... Գնդի հետ որևէ այլ խոսակցություն ինձ համար անհնար է»[31]։

Նա, ավելի շատ պրովոկացիոն նպատակներով, Երևանի քաղաքագլխին տեղեկացնում էր Պետրոգրադի դրության մասին։ Հակահեղափոխության ոճն ու ցանկությունները ըմբռնելու տեսակետից շատ ուշագրավ է այդ պատասխանը, որը հարկ ենք համարում մեջ բերել ամբողջությամբ. «Պետրոգրադը շրջապատված է կառավարությանը հավատարիմ զորքերով։ Նրան առաջարկված է հանձնվել։ Պետրոգրադում սկսվել են ջարդեր։ Բոլշևիկների զորքերը առանց մարտի հանձնել են Գատչինան և նահանջում են։ Հույս կա, որ անարյուն կլիկվիդացնեն (ապստամբությունը)։ Խռովարարների բանդան աչքի չի ընկնում իր քաջությամբ։ Բոլշևիկները լիովին մեկուսացված են։ Անգամ ինտերնացիոնալիստները նրանց թողել են (նկատի ունի Զինովևին, Կամենևին, Մարտովին և մյուսներին — Հ. Մ.)։ Կենտրոնական գործադիր կոմիտեն (նկատի ունի էսեռա-մենշևիկյան սովետների Համառուսաստանյան գործադիր կո-

28 Նույն տեղում։
29 Նույն տեղում, թ. 112։
30 Նույն տեղում։
31 Նույն տեղում, թ. 113ա։

միտեն — Հ. Մ.) և բոլոր կուսակցական կենտրոնները մեկնել են Լուգա։ Կոմիսար Դոնսկոյ»[32]։

Ահա էսեռականության «սոցիալիստական» էվոլյուցիայի վերջին պահը։

Զրույցի վերջում Շախատունուն դարձյալ հետաքրքրում էր իր ճակատագիրը։ Նա ցանկանում էր Դոնսկոյի հետ լիովին պարզել թե «խռովությունը» ճնշելու գործը ո՞վ պետք է ի կատար ածի. ինքը, թե՞ Երևանի կայազորի պետ Շիլնիկովը։ Նա ամեն կերպ աշխատում էր խույս տալ Ղամարլու մեկնելուց։ «Սպասում եմ հրամանի,— ասում էր նա. եթե դուք ինձ կհրամայեք գնալ Ղամարլու և խոսել գնդի հետ, ապա ես, իհարկե, առանց առարկության կկատարեմ, բայց պատվիրակությունը ասում է, որ դա իզուր է, և որ ես, կարող է չվերադառնամ Ղամարլուից. դա, իհարկե, կարևոր չէ, բայց խնդրում եմ ճիշտ ցուցումներ՝ տրված հարցին»[33]։

Այսպիսի մթնոլորտում սուր պայքար ծավալվեց Երևանի սովետի ներսում։ Հոկտեմբերի 29-ին քննարկվեց Պետրոգրադում «բոլշևիկների ապըստամբության» հարցը։ Իրադարձությունների ընթացքի մասին զեկուցեց քաղաքի աջ էսեռականության պարագլուխ Կիտաևը։ Մտքերի փոխանակության ժամանակ, արտացոլելով կայազորի հեղափոխական տրամադրությունները, «Պետրոգրադի ապստամբած հեղափոխական մասսաների պաշտպանությամբ» կրակոտ ճառով հանդես եկավ Կարապետյանցը, իր դեմ հարուցելով տեղական ռեակցիայի զայրույթը։ Մեզ դեռևս չի հաջողվել պարզել նրա կուսակցական պատկանելիությունը։ Կարծում ենք, որ նա ձախ էսեռ է։ Հիշյալ նիստի վերաբերյալ մանրամասն ինֆորմացիան բացակայում է։ Ինչպես երևում է, նրա մասին գրելը ձեռք չէր տալիս «Ստրաժ սվոբոդի»-ին։ Նիստում մերժվում է Կարապետյանցի առաջարկած բանաձևը։ Ընդունվում է Կիտաևի բանաձևը, որը դատապարտում է «ծայրահեղ» ելույթները, «բոլշևիկ լենինյանների» կողմից «իշխանության զավթման փորձը»։ Շարունակելով շաղակրատել «աշխատավոր ժողովրդի», «հայրենիքի» անունից, հակահեղափոխության ուժերը փարիսեցիորեն դնում են իշխանությունը «ամբողջ ժողովրդին» անցնելու, «միատարր դեմոկրատական կառավարության» ստեղծման պահանջը, որը նպատակ ուներ ֆրազների շմոլքի մեջ մի վերջին փորձով մոլորեցնել աշխատավորական զանգվածներին։

Համառոտակի այսպիսին է Երևանի հասարակական-քաղաքական կյանքում նշանավոր 1917 թվականին տեղի ունեցած պայքարի մոտավոր պատկերը։

---

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, թ. 113բ.։